

կ'երթային, կամ Ֆրանկ կը ձևանային, որովհետեւ այդ կոչումով հակակաթոլիկները կը շարունակէին գանոնք որակել: Տէր Սառի, Կ. Պոլսոյ պատրիարքը, ձերբակալուելով թիարան զրկուեցաւ իր կուսակցութեան քառասունէ աւելի երեւելի անձերու հետ, եկեղեցական կամ աշխարհական: Իսկ Երուսաղէմի պատրիարքը, նուազ ամբաստանուած ըլլալով, գահընկէց եղաւ եւ իր տեղն անցաւ Տէր Յովակիմ»³⁰):

Հոս կան կատարուելիք ճշդումներ: Երուսաղէմի սովորական ցանկերուն մէջ Պատրիարք Տէր Յովակիմ մը չկայ: Իսկ 1704-1715-ի շրջանը Երուսաղէմի պատրիարքութիւնը միացուած է Կ. Պոլսոյ պատրիարքութեան հետ: Դժուար է այս Տէր Յովակիմը նոյնացնել Քանաքեռցիին հետ, որ Երուսաղէմի պատրիարք ալ եղաւ 1775-1793-ին: Գուցէ ըլլայ այն Յովակիմ վարդապետը, որ իբր Ռամէի վանքին առաջնորդ կը յիշուի 1743-ին: (Միաբանք եւ Այցելութք, էջ 347):

1707-ին Մօթըրէյ կ'այցելէ Սելանիկ, ուր հայ բնակչութեան գոյութիւնը կը յիշէ³¹):

1707 «Նոյեմբերի 24-ին բանտարկեալները՝ Սառի պատրիարք եւ վեց-եօթը ուրիշներ Ֆրանկ դարձած ըլլալու ամբաստանութեամբ մահուան կը դատապարտուին Զօրլուի Ալի Փաշայ Վեգիրէն: Պատրիարքը ու միւս դատապարտեալները, որոնք մինչեւ այդ ատեն Լատին ծիսակատարութեան շատ նախանձախնդիր ցոյց կուտային ինքզինքնին, երբ կ'իմանան որ մահուան են դատապարտուած, կը յայտարարեն, թէ կը նախընտրեն իրենց կեանքը իրենց կրօնքէն, բարձրաձայն Մահմետական դաւանանքը կ'ընդունին, յետոյ կ'երթան թլիատուելու, բացի քահանայէ մը, Տէր Կոմիտաս անուամբ, որ հինգ ամսուան նաւապարտութենէ վերջ

ազատուած էր, որ նոյն պատճառաւ (թիարան) զրկուած էր: Վեգիրիին հրամանով քննուելէ վերջ, այս մարդը, որ ուրիշ հայերու հետ կաթոլիկ հաւատքին դառնալու մէջ ամբաստանուած էր, կը մերժէ փախչիլ իրեն փախչելու խորհուրդ տրուողներուն հետ եւ ինքզինքը կը յանձնէ Դրան պաշտօնեաներուն, որոնք զինքը կը փնտոէին առանց ճանչնալու: Ան (Կոմիտաս) կը հարցնէ անոնց. «Ո՞վ կը փնտրուէք»: Անոնք կը պատասխանեն. «Տէր Կոմիտասը»: «Ահա հոս եմ՝ կ'ըսէ ան, առէք զիս եւ ազատ թողուցէք միւսները»: Ատոր վրայ զինքը կը բռնեն եւ կը տանին Վեգիրիին, որուն քով էին նաեւ Տէր Յովահաննէս պատրիարքը եւ ուրիշ քահանաներ, որոնք այս բանտարկեալին հաւատադարձութեան դէմ կը գանդատէին, ինչպէս նաեւ ուրիշ փախստականներու դէմ, զոր կ'ամբաստանէին: Վեգիրը, անոր (Կոմիտասին) նայելով սեւեռուն եւ սովորական քամահարալից կերպով, կը հարցնէ թէ՛ ինչո՞ւ հոռոմէական կաթոլիկ դարձած է եւ լքած հայ ծիսակատարութիւնը ու դեռ չէ վերադարձած իր պաշտօնին, իր ազատութիւնը այդ պայմանով ընդունելէ վերջ: Ան կը պատասխանէ, թէ ըստ իր կարծիքին՝ հոռոմէական կաթոլիկ կրօնքը աւելի նպատակայարմար է սուրբ օրինաց քան հայկականը, եւ թէ ատիկա էր միակ պատճառը ու նպատակը, որ զինքը անոր (Պապին) հաւատալ կուտար: Բայց կը պատասխանէ Վեգիրը. «Անոնք որ քեզի այդպէս սորվեցուցին, արդեօք աւելի լա՞ւ դատաւորներ են քան թէ հայ վարդապետները ու պատրիարքները, որոնք քեզ կ'ամբաստանեն: Եւ դուն զիտե՞ս, թէ մահուան արժանի ես աշխարհի ամենազօրաւոր կայսեր (Սուլթանին) հրամանին դէմ ընդվզելու համար, — հրաման, ըստ որուն ամէն ոք պէտք է ազատ, անվրդով մնար իր հօր հաւատքին մէջ, իսկ ով որ իր հաւատքէն դժգոհ է եւ զայն սխալ կը նկատէ, պէտք է միայն ուղղափառ կրօնքը ընդունի, որ մահմետականութիւնն է»: »:

30) Անդ՝ էջ 269-270:

31) Անդ՝ էջ 278: